ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Ժաննա Վարդանյան[1]

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ

Բանալի բառեր՝ *Իրան, Հայաստան, Արցախ, ԼՂ հակամարտություն, Ադրբեջան, 44-օրյա պատերազմ, դիրքորոշում, Ռուսաստան, Թուրքիա, Իսրայել:*

2020թ. աշնանն Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմն ու դրա հետևանքները նոր մարտահրավերներ ստեղծեցին ոչ միայն Հայաստանի ու Արցախի, այլ նաև տարածաշրջանային մեկ այլ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության համար: Իր հյուսիսարևմտյան սահմանների անմիջական հարևանությամբ պատերազմի բռնկումը Իրանի համար հղի էր մի շարք վտանգներով, որոնց մի մասը վերացավ ռազմական գործողությունների դադարեցմամբ: Սակայն պատերազմի վերջնարդյունքն Իսլամական Հանրապետության համար երկարաժամկետ հեռանկարում նոր սպառնալիքներ առաջացրեց:

Արցախյան առաջին պատերազմից հետո Արցախյան հակամարտության հարցում Իրանի դիրքորոշումը մնացել է անփոփոխ: Այն հիմնականում ամփոփվում է մի քանի դրույթներում, դրանք են.

- հակամարտության խաղաղ կարգավորում,
- երկրների տարածքային ամբողջականության պահպանում,
- արտաքին ուժերի միջամտության բացառում:

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրոս, Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ-ի ավագ մասնագետ: Էլ. հասցե՝ shanna.vardanyan@gmail.com:

Հենց այս ակբունքների վրա հենվելով և խիստ կարևորելով պատերազմի դադարեցումը՝ Իրանը սկզբից սեթ դեմ արտահայտվեց ռազմական գործողություններին[2]: Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ իրանական կողմի դիրքորոշման մեջ հստակ ամրագրվեցին նաև «ահաբեկիչների ներկայության բացառման», «Իրանի համար տարածաշրջանի աշխարհա-քաղաքական փոփոխության անընդունելի լինելու» մասին դրույթները: Վերոնշյալ դրույթներից յուրաքանչյուրն Իրանի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքների բաղկացուցիչ մաս են, և նման դիրքորոշմամբ Թեհրանը հանդես է գալիս տարածաշրջանային այլ հակամարտությունների ժամանակ ևս:

44-օրյա պատերազմն Իրանին ստիպեց արձագանքել իրավիճակին համապատասխան, և պատերազմի ընթացքում Իսլամական Հանրապետության դիրքորոշման մեջ նրբերանգային որոշ փոփոխություններ նկատվեցին: Մասնավորապես՝ պատերազմի առաջին երկու օրը, երբ դեռ հստակ չէր, թե գործողություններն ինչ արագությամբ ու հունով են զարգանալու, Իրանը հանդես եկավ ավելի զգուշավոր հայտարարությամբ և կողմերին զսպվածության, երկխոսության ու ռազմական գործողությունների դադարեցման կոչ արեց: Օրեր անց, երբ հիմնականում պարզ էր, թե ինչ հունով են ընթանում ռազմական գործողությունները, իրանցի բարձրաստիճան պաշտոնյաները, այդ թվում՝ հոգևոր առաջնորդի խորհրդականը, ԱԳՆ խոսնակը, կառավարության խոսնակը, նախագահի աշխատակազմի ղեկավարը, սկսեցին շեշտել, թե «Հայաստանի կողմից Ադրբեջանի օկուպացված տարածքները պետք է հետ վերադարձվեն»: Այդ

2 ایران خواستار توقف درگیری و آغاز گفت وگو میان باکو و ایروان شد, irna.ir, https://www.irna.ir/news/84056463/ , (Իրանը բախումների դադարեցման և Բաքվի ու Երևանի միջև երկխոսության կոչ է արել), 27.09.2020, հասանելի է՝ 07.07.2022:

մասին հետագայում նաև հայտարարեց անձամբ Իրանի հոգևոր առաջնորդը[3]:

Թեև Իրանից հայտարարում էին «օկուպացված տարածքների վերադարձի» մասին, սակայն ո՛չ պատերազմը, ո՛չ էլ դրանում Ադրբեջանի հաղթանակը ձեռնտու չէր Իրանին: Տարածաշրջանում Իրանն այն միակ երկիրն է, որը սահմանակցում է և՛ Հայաստանին, և՛ Արցախին, և՛ Ադրբեջանին, հետևաբար պատերազմի բոլոր հետևանքները, այդ թվում՝ ռազմական ու քաղաքական, զգալու էր նաև Իրանը: Այդ իսկ պատճառով «օկուպացված տարածքների վերադարձի» մասին խոսելուն զուգահեռ Իսլամական Հանրապետությունը նաև միշտ շեշտել է ռազմական գործողությունների դադարեցման անհրաժեշտությունը: «*Մենք հարգում ենք Ադրբեջանի ժողովրդի իրավունքներն ու ընդգծում տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությունը, սակայն ոչ մի հարց կրակի, պատերազմի և արյան միջոցով չի լուծվում*»,- ընդգծել էր Իրանի նախագահ Հասան Ռոհանին[4]: Իր սահմանների հարևանությամբ պատերազմն Իրանի համար վտանգավոր էր մի քանի գործոնով պայմանավորված.

- Իրանի տարածք արկեր ու հրթիռներ էին ընկնում,
- Իսրայելական արտադրության ԱԹՍ-ները թռիչքներն էին իրականացնում Իրանի սահմանների հարևանությամբ ու նաև հայտնվում Իրանի տարածքում,
- Իրանի հյուսիսում ադրբեջանական կողմը վարձկան ահաբեկիչներ էր տեղակայել,

3 واکنش رهبر انقلاب به جنگ قرباغ, khabaronline.ir, https://www.khabaronline.ir/news/1450888/, (Հեղափոխության առաջնորդի արձագանքը Ղարաբաղի պատերազմին), 03.11.2020, հասանելի է՝ 07.07.2022:

4 سخنان روحانی در جلسه هیات دولت, irna.ir, https://www.irna.ir/news/84067982/, (Ռոհանիի ելույթը կառավարության նիստում), 07.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

- Թյուրքախոսների գործոնով պայմանավորված՝ կար Իրանի ներսում համերաշխության խաթարման վտանգ:

Ռազմական գործողությունների մեկնարկով առաջին անմիջական մարտահրավերը, որին բախվեց Իրանն, իր տարածք հրթիռների ու արկերի հայտնվելու խնդիրն էր: Պատերազմի ընթացքում հարյուրավոր արկեր ու հրթիռներ են ընկել իրանական կողմում՝ սահմանակից շրջաններին պատճառելով նյութական ու մարդկային վնասներ: Այս կապակցությամբ Իրանի տարբեր պաշտոնյաներ հանդես են եկել նախազգուշացնող հայտարարություններով՝ շեշտելով, որ Իրանի դեմ անգամ ոչ կանխամտածված ագրեսիա չեն հանդուրժելու[5]:

Պատերազմին դեմ լինելու Իրանի շարժառիթներից մեկը նաև սահմանի մյուս կողմում իսրայելական ներկայությունն էր, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից իսրայելական արտադրության ԱԹՍ-ների կիրառումը: Այդ սարքերից մի քանիսը նաև Իրանի տարածք ընկան՝ ամենայն հավանականությամբ խոցվելով հենց Իրանի ՀՕՊ կողմից[6]:

ԻԻՀ մյուս հիմնական մտահոգություններից էր ռազմական գործողություններին ահաբեկիչների ներգրավվածությունը, այն ահաբեկիչների, որոնց դեմ Թեհրանը պայքարել էր Սիրիայում ու Իրաքում: Ահաբեկիչների ներկայության անընդունելի լինելու մասին հայտարարություններ եղան պատերազմի ողջ ընթացքում և դրանից հետո: Այդ հայտարարությունները հատկապես ակտիվացան 2020-ի հոկտեմբերի վերջին: Այդ ժամանակ նաև Իրանի ԶՈՒ, այդ թվում՝ Իսլամական հեղափոխության

5ابلاغ اعتراض رسمی ایران به آذربایجان و ارمنستان, isna.ir, https://www.isna.ir/news/99071612423/, (Իրանը բողոքի նոտա է հղել Ադրբեջանին ու Հայաստանին), 07.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

6 چرا پای پهپادهای انتحاری و راکت‌های جنگ قره‌باغ به ایران باز شد؟, yjc.ir, https://www.yjc.news/fa/news/7525860/, (Ինչու՞ են Ղարաբաղի պատերազմի մահապարտ ԱԹՍ-ներն ու հրթիռները հայտնվում Իրանում),15.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) և բանակի բարձրաստիճան ղեկավարները սկսեցին գրեթե ամենօրյա ռեժիմով այցելել սահմանակից շրջաններ[7]: Սա այն ժամանակահատվածն էր, երբ Ադրբեջանն արդեն օկուպացրել էր Արցախի հարավը, որ սահմանակից էր Իրանին, և մոտենում էր Սյունիքին: Ադրբեջանաթուրքական մամուլն արդեն գրում էր «Զանգեզուրի» գրավման, հայ-իրանական սահմանը կտրելու մասին[8]:

Այդ ֆոնին Իրանի ԶՈՒ-ն ավելի շատ ուժեր կուտակեց սահմանին, նաև անցկացրեց զորավարժություններ[9]: Եվ հենց այստեղ էր, որ նկատվեց Իրանի դիրքորոշման մեջ նրբերանագային հաջորդ փոփոխությունը: Իրանի բարձրաստիճան զինվորականությունը սկսեց հայտարարել տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխության անթույլատրելիության, և դրա՝ Իրանի համար կարմիր գիծ լինելու մասին[10]: Ակնհայտ էր, որ Իրանի ուղերձերն այս դեպքում ուղղված էին Սյունիքի վրա հավանական հարձակման դեմ:

Պատերազմի դադարեցումն Իրանի համար կարևոր էր նաև ներքին անվտանգության ու համերաշխության ապահովման տեսանկյունից: Սա հատկապես կարևորվում էր երկրի հյուսիսարևմտյան թյուրքախոս նահանգներում խմորումների

---

7 فرمانده کل سپاه از مناطق مرزی خداآفرین بازدید کرد, mehrnews.ir, https://www.mehrnews.com/news/5056800/, (ԻՀՊԿ հրամանատարն այցելել է Խոդաֆարինի սահմանային շրջաններ), 26.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

8 بازی خطرناک ائتلاف آذربایجان، ترکیه و رژیم صهیونیستی در شمال رود ارس به بهانه آزادی «قره باغ», mashreghnews.ir, https://www.mashreghnews.ir/news/1135803/, (Ադրբեջանի, Թուրքիայի և սիոնիստական ռեժիմի դաշինքը Ղարաբաղն ազատագրելու պատրվակով Արաքսի հյուսիսում վտանգավոր խաղ է սկսել), 30.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

9 نیروی زمینی ارتش در مناطق مرزی شمال غرب کشور برگزار شد۹۹رزمایش عاشقان ولایت , isna.ir, https://www.isna.ir/news/99080401687/, (Իրանի բանակի ցամաքային զորքերը զորավարժություն են անցկացրել երկրի հյուսիս-արևմուտքում), 25.10.2022, հասանելի է՝ 07.07.2022:

10استقرار یگان‌هایی از نیروی زمینی سپاه در مرز خداآفرین, iribnews.ir, https://www.iribnews.ir/fa/news/2879218/, (Խոդաֆարինի սահմանին ԻՀՊԿ ցամաքային ուժերի ստորաբաժանումներ կտեղակայվեն), 24.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

բացառման համատեքստում: Այդ նահանգներում հոգևոր առաջնորդի ներակայացուցիչները[11], այդ շրջաններից ընտրված պատգամավորները[12], հասարակական գործիչները պատերազմի սկզբից ևեթ Ադրբեջանին աջակցող և «տարածքների ազատագրումը» շնորհավորող հայտարարարություններով են հանդես եկել: Իրանի թյուրքախոս նահանգներում ադրբեջանամետության միտումներ եղել են նաև նախկինում, այդ թվում՝ խորհրդարանի պատգամավորների, հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների շրջանում: Այդ շրջանակների կողմից նաև տարբեր տարիներին, այդ թվում՝ 44-օրյա պատերազմի ընթացքում կազմակերպվել են Արցախյան հակամարտությանը նվիրված գիտաժողովներ, որոնց ժամանակ հնչել են ադրբեջանամետ դիրքորոշումներ: Այս առումով պատերազմին այդ նույն խմբերի կողմից հնչեցրած հակահայկական հայտարարությունները սպասելի էին: Թյուրքախոսների այս բացահայտ աջակցությունը մեծ դժգոհություն առաջացրեց Իրանի ներսում, և նրանց գործելաոճը որակվեց որպես Իրանի պաշտոնական դիրքորոշմանը՝ չեզոքությանը հակասող[13]: Սակայն, եթե թյուրքախոսների այս պահվածքն ուղղված էր միայն Հայաստանի դեմ, ապա պանթյուրքական շրջանակների գործունեությունը ուղղված էր ոչ միայն Հայաստանի, այլև՝ Իրանի դեմ: Պատերազմի ընթացքում պանթյուրքական տարրերը ի աջակցություն Ադրբեջանի մի քանի ակցիաներ են անցկացրել, որոնց ընթացքում

11 بیانیه نمایندگان ولی فقیه در شمال غرب کشور, iribnews.ir, https://www.iribnews.ir/fa/news/2842204/, (Արևելյան Ատրպատական, Արևմտյան Ատրպատական, Զանջան և Արդաբիլ նահանգներում հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների համատեղ հայտարարությունը), 30.09.2020, հասանելի է՝ 07.07.2022:

12 بیانیه مجمع نمایندگان شمالغرب در خصوص قره باغ, qafqaz.ir, https://bit.ly/3RjgFxr, (Հյուսիսարևմտյան նահանգների պատգամավորների համատեղ հայտարարությունը Ղարաբաղի վերաբերյալ), 01.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

13 مواضع دیپلماتیک را به دستگاه دیپلماسی واگذار کنیم, irna.ir, https://www.irna.ir/news/84064868/, (Դիվանագիտական դիրքորոշումը թողնենք դիվանագիտական ապարատին), 05.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

նաև հնչեցրել են հայ-իրանական Նորդուզի անցակետը փակելու պահանջներ[14]: Ակցիաներն ավարտվել են նաև ձերբակալություններով: Պանթյուրքական քարոզչական ռեսուրսները ակտիվորեն տարածել են ադրբեջանթուրքական թեզերը, այդ թվում՝ Հայաստանի կողմից իբր «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) զինյալների ներգրավման վերաբերյալ: Ընդ որում՝ այն շեշտադրմամբ, որ այդ «ահաբեկիչներն» Իրանի տարածքով են մեկնում Հայաստան: Պանթյուրքական շրջանակները նաև լայնորեն շրջանառել են այն թեման, որ ՌԴ-ն Իրանի տարածքով զենք է ուղարկում ՀՀ-ին: Սա այնքան շատ հնչեղություն ստացավ, որ Իրանից մի քանի անգամ հերքեցին այս լուրը, անգամ «շահարկումներից խուսափելու համար» թույլ չտվեցին, որ ՌԴ-ից Հայաստան ռազմական բեռնատարներ տեղափոխվեն[15]: Հետագայում Իրանից հայտարարեցին, որ պատերազմի ընթացքում սահմանը փակել են ու թույլ չեն տվել զենք մատակարարվի[16]:

Պատերազմը դադարեցնելու, Արցախյան հակամարտության պատրվակով տարածաշրջանում այլ երկրների դիրքերի ամրապնդումը և սեփական դիրքերի կորուստը թույլ չտալու նպատակով Իրանը փորձեց նաև միջնորդություն իրականացնել և պատերազմին վերջ դնելու ծրագիր ներկայացրեց: Արցախյան առաջին պատերազմում ձախողված միջնորդական առաքելությունից հետո Իրանը միշտ է ջանացել հակամարտությունում նորից հանդես գալ միջնորդությամբ: Այդ

14 فریادهای قاراباغ بیزیمدی بیزیم قالاجاق در تبریز, Günaz TV, https://bit.ly/3IpCVla, («Ղարաբաղը մերն է, մերն է լինելու» կոչեր Թավրիզում), 01.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

15 ماجرای انتقال تجهیزات نظامی به ارمنستان, iribnews.ir, https://www.iribnews.ir/fa/news/2841244/, (Հայաստան սպառազինություն տեղափոխելու եղելությունը), 30.09.2020, հասանելի է՝ 07.07.2022:

16 عراقچی: پیشنهاد ایران می‌تواند به خاتمه مسالمت آمیز درگیری‌های قره باغ کمک کند, irna.ir, https://www.irna.ir/news/84095975/, (Իրանի առաջարկը կարող է նպաստել Ղարաբաղում բախումների դադարեցմանը), 01.11.2020, հասանելի է՝ 07.07.2022:

մասին առաջարկներ ու պատրաստակամություն Իրանը հայտնել է տարբեր տարիներին:

Պատերազմը դադարեցնելու իր նոր ծրագրի մասին Թեհրանը հայտարարեց հոկտեմբերի 5-ին, սակայն սկսեց ներկայացնել միայն հոկտեմբերի վերջին: Թեև ծրագրի հիմնական մանրամասներն այդպես էլ հայտնի չդարձան, սակայն ըստ հայտարարությունների՝ ծրագիրը ենթադրում էր.

- Ռազմական գործողությունների դադարեցում,
- «Ադրբեջանի տարածքների օկուպացիայի» վերացում,
- Հայ «փոքրամասնության» իրավունքների պահպանում,
- Տարածաշրջանի երկրների օգնությամբ բանակցություններ[17]:

Տարածաշրջանի երկրներ ասելով՝ Թեհրանը նկատի ունի հենց Իրանը, Ռուսաստանը և Թուրքիան: Այս համատեքստում իրանական կողմը մշտապես բացառել է հակամարտության լուծմանը արտատարածաշրջանային ուժերի մասնակցությունը՝ շեշտը դնելով խնդրի՝ տարածաշրջանի երկրների միջնորդությամբ կարգավորման վրա: Իրանում նաև միշտ թերահավատորեն են մոտեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությանը՝ համարելով, որ այն արդյունավետ չէ: Հենց այս պատճառով է նաև, որ Իրանը ողջունեց 3+3 մեխանիզմի ստեղծման ադրբեջանաթուրքական առաջարկը, և այդ հարթակն իրականություն դարձնելու համար արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը տարածաշրջանային շրջայց կատարեց՝ մեկնելով Բաքու, Մոսկվա, Երևան, Թբիլիսի, Անկարա: Սա Թեհրանի համար իր սահմանների հարևանությամբ տեղի ունեցող գործընթացներից դուրս չմնալու, սեփական շահերն ապահովելու միջոց էր

17 عراقچی: گروه مینسک در حل بحران قره باغ ناتوان بوده است, iribnews.ir, https://www.iribnews.ir/fa/news/2888547/, (Արաղչի. Մինսկի խումբը ղարաբաղյան ճգնաժամի կարգավորման հարցում անկարող է եղել), 31.10.2020, հասանելի է՝ 07.07.2022:

դիտարկվում և, իհարկե, տեղավորվում էր տարածաշրջանի խնդիրները տարածաշրջանի երկրների միջոցով լուծելու Իրանի արտաքին քաղաքական սկզբունքի շրջանակներում[18]: Մյուս կողմից՝ Հարավային Կովկասն Իրանն ընկալում է որպես իր պատմական տարածք, որտեղ այլոց ներկայությունն անընդունելի է: Այս տեսանկյունից՝ Իրանի համար խիստ անցանկալի էր Թուրքիայի դիրքերի ամրապնդումը և առավել նախընտրելի էր հրադադարի՝ Ռուսաստանի միջնորդությամբ հաստատվելը: Թեև նոյեմբերի 9-ի հրադադարից հետո Թեհրանից հայտարարեցին, որ իրենց ծրագիրը շատ նման է եղել հրադադարի հայտարարության դրույթներին, սակայն այդ նույն հայտարարության 9-րդ և 10-րդ կետերն Իրանի համար խնդրահարույց էին[19]:

Իսլամական հանրապետությունը բախվեց նոր մարտահարավերների և Թեհրանի համար առաջնային մտահագություն դարձավ հայ-իրանական սահմանի գոյության հարցը: Իրանական կողմի դիրքորոշման մեջ ամրագրվեց և մշտապես բարձրաձայնվեց «Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիության ու տարածքային ամբողջականության՝ Իրանի համար կարմիր գիծ լինելու» հարցը:

Իրանի այս դիրքորոշումն էլ պատերազմից հետո Ադրբեջանում հակաիրանական քարոզչության ուժգնացման և 2021թ. աշնանը Բաքու-Թեհրան հարաբերությունների աննախադեպ սրման հանգեցրեց: Իրան-Ադրբեջան քաղաքական փոխհրաձգության շարժառիթ դարձան Արցախ իրանական բեռնատարների ելումուտը, Գորիս-Կապան ճանապարհին

18 سفر ظریف به قفقاز از موفق‌ترین سفرهای وزیر امور خارجه بوده است, irna.ir, https://www.irna.ir/news/84206673/, (Կովկաս այցն արտգործնախարար Զարիֆի ամենահաջողված այցերից էր), 01.02.2021, հասանելի է՝ 07.07.2022:

19 عمویی: حضور نیروهای تکفیری را در مرزهای خود تحمل نخواهیم کرد, irna.ir, https://www.irna.ir/news/84115317/, (Ամուի. Մեր սահմանների հարևանությամբ թաքֆիրի ուժերի ներկայությունը չենք հանդուրժելու), 19.11.2020, հասանելի է՝ 07.07.2022:

ադրբեջանական անցակետի տեղադրումն ու իրանցի վարորդների ձերբակալումը: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Իրանից ամենատարբեր մակարդակներով հայտարարեցին իրենց համար աշխարհաքաղաքական փոփոխության, տարածաշրջանում Իսրայելի ներկայության, վարձկան ահաբեկիչների գործունեության անթույլատրելիության մասին, զինված ուժեր ու զինտեխնիկա կուտակեցին սահմանին, անցկացրին զորավարժություններ[20]:

Թեև հետագայում Բաքու-Թեհրան հարաբերություններում լարվածությունը թուլացավ, սակայն տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխության՝ Իրանի համար կարմիր գիծ լինելու դիրքորոշումը մնաց անփոփոխ: Եվ այստեղ Իրանի դիրքորոշումն առնչվում է ոչ միայն պարզապես ՀՀ սահմանների նկատմաբ ոտնձգությանը, այլև ՀՀ-ում «միջանցքային տրամաբանությամբ» Ադրբեջան-Նախիջևան տարանցիկ ճանապարհի ստեղծմանը[21]: Թեհրանն անընդունելի է համարում հայկական վերահսկողությունից դուրս ցանկացած ճանապարհի ստեղծում, ինչը հայ-իրանական սահմանի գոյության համար անմիջական սպառնալիք կարող է դառնալ: Իրանի համար ՀՀ-ով միջանցքների ստեղծումը անցանկալի է նաև սեփական տարանցիկ դերի նվազեցման վտանգի տեսանկյունից: Իրանը, լինելով Ադրբեջան-Նախիջևան կապի հիմնական ապահովողը, չի ցանկանում զրկվել այդ դերից և Բաքվի նկատմամբ ունեցած կարևոր լծակից[22]: Այդ պատճառով է նաև, որ Իսլամական

20 Բաքու-Թեհրան նոր լարվածության ընթացքը, Orbeli.am, https://bit.ly/3OYhwlx, 02.11.2021, հասանելի է՝ 07.07.2022:

21 ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է Ալի Շամխանիի հետ, seco.am, https://seco.am/information/press_releases/538?lang=hy, 07.07.2022, հասանելի է՝ 08.07.2022:

22 تبعات اقتصادی قرارداد آذربایجان و ارمنستان برای ایران/از دست رفتن نوار مرزی ایران با ارمنستان, farsnews.ir, https://www.farsnews.ir/news/13990823000074/, (Հայաստանի և Ադրբեջանի համաձայնագրի տնտեսական հետևանքներն Իրանի վրա, Հայաստանի հետ Իրանի սահմանը վերանում է), 13.11.2020, հասանելի է՝ 07.07.2022:

Հանրապետությունում գոհունակությամբ ընդունեցին Արցախի հարավային օկուպացված տարածքներից դեպի Նախիջևան Իրանի տարածքով երթուղու ստեղծման հնարավորությունը[23]: Իրանը չի ցանկանում կորցնել նաև դեպի Կենտրոնական Ասիա Թուրքիայի համար ունեցած իր տարանցիկ նշանակությունը և թույլ տալ, որ Անկարան այդ «միջանցքն օգտագործի» Իրանի դեմ պանթյուրքական առանցք ձևավորելու համար:

Իր դիրքերի թուլացումը թույլ չտալու նպատակով պատերազմից հետո Իրանը նաև Ադրբեջանի ու Հայաստանի տնտեսական հարաբերությունների խթանմանը, էներգետիկ, տարանցիկ նախագծերի իրագործմանը լծվեց: Այս շրջանակներում Թեհրանը նաև Արցախի օկուպացված տարածքներում, այսպես կոչված, վերակառուցման աշխատանքներին մասնակցելու ցանկություն հայտնեց, սակայն շուրջ երկու տարվա ջանքերից հետո ընդամենը մեկ հիվանդանոցի և մեկ դպրոցի կառուցման հնարավորություն ստացավ[24]:

Ինչ վերաբերում է ՀՀ հետ փոխհարաբերություններին՝ ապա այս դեպքում շեշտը հատկապես դրվում է Սյունիքի զարգացման վրա: Իրանական կողմը կարևորում է ՀՀ հետ անխափան հաղորդակցությունը և Հայաստանը դիտարկում նաև որպես այլընտրանքային երթուղի: Այդ պատճառով էլ առանձնահատուկ ուշադրության է արժանացնում Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին, որի կառուցմանը Թեհրանը մասնակցելու

23 توسعه همکاری‌های ترانزیت ایران و جمهوری آذربایجان, iribnews.ir, https://www.iribnews.ir/fa/news/3448462/, (Իրանի և Ադրբեջանի միջև տարանցիկ համագործակցությունը զարգանում է), 18.05.2022, հասանելի է՝ 07.07.2022:

24 ساخت مدرسه و بیمارستان در قرهباغ به شرکت‌های ایرانی واگذار شده است, tahlilbazar.com, https://www.tahlilbazaar.com/news/158495/, (Իրանական ընկերություններին Ղարաբաղում դպրոցի և հիվանդանոցի կառուցում է հանձնվել), 27.06.2022, հասանելի է՝ 07.07.2022:

պատրաստակամություն է հայտնել[25]: Սյունիքի՝ Իրանի համար կարևորության մասին է վկայում նաև այն, որ Իսլամական հանրապետությունը նախատեսում է ՀՀ Կապան քաղաքում հյուպատոսություն բացել[26]:

Այսպիսով, 2020 թվականի Արցախյան պատերազմի ընթացքում և դրանից հետո Իրանը հանդես է եկել երկրների տարածքային ամբողջականությանն աջակցելու, տարածաշրջանում արտատարածաշրջանային ուժերի, ահաբեկիչների ներկայության բացառման, աշխարհաքաղաքական փոփոխության անթույլատրելիության դիրքորոշմամբ: Միանշանակ է, որ իր սահմանների հարևանությամբ պատերազմն անընդունելի էր Իրանի համար՝ թե՛ դրա ռազմական, թե՛ աշխարհաքաղաքական հետևանքների տեսանկյունից: Ուստի, Իրանը պատերազմը դադարեցնելու ծրագիր ներկայացրեց, որը սակայն հաջողություն չունեցավ: Պատերազմի վերջում և դրանից հետո էլ Իրանը հաստատակամորեն առաջ տարավ իր համար աշխարհաքաղաքական փոփոխության կարմիր գիծ լինելու ուղեգիծը, ինչը վերաբերում է ՀՀ-ԻԻՀ սահմանի փոփոխության, միջանցքների ստեղծման անթույլատրելիությանը: Միաժամանակ Թեհրանը փորձում է ամրապնդել տարածաշրջանում քաղաքական-տնտեսական ներկայությունը:

25 جزییات توافق ایران و ارمنستان برای ساخت مسیرهای ترانزیتی جدید, irna.ir, https://www.irna.ir/news/84494766/, (Տարանցիկ նոր ճանապարհների ստեղծման շուրջ Իրանի և Հայաստանի պայմանավորվածության մանրամասները), 06.10.2021, հասանելի է՝ 07.07.2022:

26 Կապանում Իրանի հյուպատոսությունը տարբեր ոլորտներում նոր համագործակցությունների հնարավորություն կստեղծի. դեսպան,armenpress.am, https://bit.ly/3aogdxb, 27.05.2022, հասանելի է՝ 07.07.2022:

IRAN'S POSITION DURING AND AFTER THE THIRD ARTSAKH WAR

Zhanna Vardanyan

(Summary)

Since the outbreak of the war unleashed by Azerbaijan against Artsakh in 2020, Iran has called for an immediate ceasefire and a peaceful settlement of the conflict. To achieve that goal, Iran also offered its own support.During the war, Tehran emphasized the need to return the so-called "occupied territories" to Azerbaijan, but a possible attack on the Syunik region of the Republic of Armenia, with which Iran borders, forced Tehran to announce that geopolitical changes in the region are unacceptable to IRI. This position of the Islamic Republic remained unchanged after the war and later caused a sharp deterioration in relations with Azerbaijan. In order to neutralize the newly emerged challenges and not to be left out of the regional processes, Iran also advanced the idea of creating a 3+3 platform while trying to strengthen economic ties with Azerbaijan and Armenia and ensure its political and economic presence in Syunik.

ПОЗИЦИЯ ИРАНА ВО ВРЕМЯ И ПОСЛЕ ТРЕТЬЕЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ

Жанна Варданян

(Резюме)

С самого начала военных действий, развязанных Азербайджаном против Арцаха, Иран призвал к прекращению войны и мирному урегулированию конфликта, для достижения чего предложил свою поддержку. В ходе войны Тегеран подчеркивал необходимость возврата так называемых «оккупированных территорий Азербайджана», но на фоне возможного нападения на Сюникский район РА, который граничит с Ираном, Тегеран заявил о недопустимости геополитических изменений в регионе и о том, что международно признанные границы Армении являются красной линией для Ирана. Иран продолжил придерживаться этой позиции и после войны, что в дальнейшем стало причиной резкого обострения отношений с Азербайджаном. Чтобы нейтрализовать вновь созданные вызовы, не остаться в стороне от региональных процессов, Иран также поддержал идею создания платформы 3+3, параллельно пытаясь укрепить экономические связи с Азербайджаном и Арменией, обеспечить политическое и экономическое присутствие в Сюнике.